ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱՅՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆ

ՀՀ ք.Երևան, 0047, Արմենակյան 153
Հեռ. (+374 10) 65-42-40
Էլ.փոստ norqinf@mail.ru

ՀՀ ք.Երևան, 0040, Աճառյան փ. 2
Հեռ. (+374 10) 61-71-07
Էլ.փոստ armaidsofficial@gmail.com

Հ/1161-2024
03.05.2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2024 թվականի ապրիլի 22-ի ՀՀ պետական վերահսկողության ծառայության 22.04.2024թ. Ե/966-24 գրությունը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 121-րդ կետի պահանջներով,

ՊԱՐԶԵՑԻ

1. «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից կազմակերպված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/16» ծածկագրով գնանշման հարցման արդյունքում 2024 թվականի հունվարի 24-ի հանձնաժողովի N 3 արձանագրությամբ 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊ ընկերությունը:
2. 2024 թվականի ապրիլի 22-ի ՀՀ պետական վերահսկողության ծառայության 22.04.2024թ. Ե/966-24 գրության համաձայն՝ Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 33-րդ հոդվածի 8-րդ կետի՝ պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է:
3. Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի՝ (...լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:...), գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 33-րդ հոդվածի 8-րդ կետի՝ (երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի

պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը) պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ներառել «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲ ընկերության և «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊ ընկերության միջև 19.02.2024թ. կնքված թիվ ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/16-01 պայմանագիրը միակողմանիորեն լուծել:

5/3/2024

ՍՏԵՓԱՆ ԱԹՈՅԱՆ

Signed by ATOYAN STEPAN 2910870278

ՏՆՕՐԵՆ **ՍՏԵՓԱՆ ԱԹՈՅԱՆ**